երկուղալի եղած է, ըստ խնդրանաց բարեպաշտ մերազնեայ ժողովրդականաց տեղւոյն և ըստ միջնորդութեան նոյն Գ. Եր. Կառավարչի վիճակին՝ Պայծառափայլ իշխան Յովհաննէս Մուրատ-Մանուկ-Պէկ՝ բարեհաճած է կառուցանել 'ի նմին իսկ տեղւոջ՝ նոր քարուկրեայ եկեղեցի մի իւր սեպհական ծախիւք և արդեամբք 'ի յիշատակ հին և նոր ննջեցելոց իւրոց։

ՑՈՒՑԱԿ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՑ Ի ՆՊԱՍՏ ՇԻՆՈՒԹԵԱՆՑ ՄԱՑՐ ԱԹՈՌՈՑՍ.

(Շարունակութիւն)

Յ. Բ. Ի. Ի. կամ Յ. Ս. Ա. Ն. Ջ. Ի. Ի. Գ. Ա. Ս. Ա. Ն.

Հասարակութիւն Մարաղայ գեղջ	65	
Մարաղայ գեղջ հասարակութեան կանայքն	3	31
Մարալեան գիւղացի Առստամ Տօնիեան և իւր մայր Մարիամն	10	
Սարաւեցի նոր մկրտեալ Յովհաննէս	2	
Հասարակութիւն Սարաւ գեղջ	45	
Մասնաւոր գիւղորայքն՝ Հասան-ղալայ, Մարալեան, և Խորուզլու	20	
Հասարակութիւն Ներքին Շէն գեղջ	50	
Հասարակութիւն վերին Շէն գեղջ	30	
Ներքին Շինացի Շահում Առաքելեան	—	70
Հասարակութիւն Գիւլստան գեղջ	12	
Խրխափորեցի Բէկլար բէկ և իւր կին Եղիսաբէթ	8	
Հասարակութիւն Խրխափոր գեղջ	7	
Բէուկ-բէկ մելիք Բէկլարեանց	6	
Հասարակութիւն Էրքէջ գեղջ	20	
Հասարակութիւն Մանուշեցիք գեղջ	12	
Հասարակութիւն Ղարաբուլաղ գեղջ	7	
Հասարակութիւն Բոզլուխ գեղջ	5	
Ղարաչինարեցի Սարգիս մելիք-Ստեփանեան	—	2
Ղարաչինարեցի Թէմուրազ Բէկ մելիք-Բէկլարեանց	25	
Հասարակութիւն Ղարաչինար գեղջ	38	
Բարիսեցի Մովսէս քահանայ Մկրտչեան Տէր Աբրահամեանց	3	
Հասարակութիւն Բարիս գեղջ	15	
Նոր Շինացի Մագթաղ Զաքի և Սոփիայ Ուսուփեան	3	
Հասարակութիւն Նոր-շէն գեղջ	13	
Հասարակութիւն Թրիշեցիք գեղջ	50	
Հասարակութիւն Ներքին-Զայղու գեղջ	13	
Հասարակութիւն Վերին-Զայղու գեղջ	16	
Վերին-Զայղուի կանայքն	5	81
Վերին-Զայղուեցի Աստուածատուր և գանձապետ Յովսէփ Եոկարեան	6	
Հասարակութիւն Մատաղիս գեղջ	5	
Կուսապատեցի Յարութիւն բէկ Ալթաբէկեան	3	
Հասարակութիւն Մոխրաթաղ գեղջ	17	
Հասարակութիւն Սէյսուլան գեղջ	18	
Հասարակութիւն Մաղաւուզ գեղջ	10	
Հասարակութիւն Վարնկնաթաղ գեղջ	5	
Հասարակութիւն Մեծ-շէն գեղջ	16	
Հասարակութիւն Գիւլաթաղ գեղջ	12	
Հասարակութիւն Ջանիաթաղ գեղջ	12	
Հասարակութիւն Տօնին-շէն գեղջ	4	
Հասարակութիւն Ղաղանչի գեղջ	6	
Հասարակութիւն Կուսապատ գեղջ	85	
Ի Խաչէն գաւառակէ	48	28

(Շարունակելի)

Պ. ԳՐԻԳՈՐ Ս. ԹՈՒՇՄԱԼԵԱՆՑ՝ ԵՒ ՆՈՐՈՒՆ ԹԱՂՄԱՆ ՑՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԸՆԹԵՐՑԵԱԼ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ.

Անցեալ ամսոյ 7-նին՝ Մոզդոկի մեր սիրելի Ազգայնոց երևելիներէն՝ Պ. Գրիգոր Ստեփանեան Թուշմալեանց՝ իւր մահկանացու կենաց ընթացքը կնքելով, յաջորդ օրը արժանաւոր շքով յուղարկաւորութեան հանդէսը կը կատարուի, և մարմինը 'ի հող գերեզմանի կ'ամփոփուի։ Նոյն օրը բարեկրօն Յովհաննէս Աւագ Քահանայն Խոսրովեանց՝ քաղաքին Ս.

Աստուածամօր եկեղեցւոյ մէջ մի դամբանական կ'ընթեռնու, զոր ստորև կը հաղորդենք մեր ընթերցողաց։

Արժանայիշատակ Թուշմալեանց՝ Մոզդոկի մերազնեայ մանկուոյն Ազգ. լուսաւորութեան և դաստիարակութեան համար կանգնած դպրոցով՝ արդէն անմահացուցած է իւր անունը և բարի յիշատակը։

Այս դարուս մէջ՝ որք Ազգ. ներկայ և ապագայ մանկուոյն դաստիարակութեան՝ լուսաւորութեան և յառաջադիմութեան ամենակարևոր և անհրաժեշտ միջոցները և պիտոյքը կը հնարեն և կը մատակարարեն օրինաւոր և օգտաւէտ եղանակօք, այնպիսիք ոչ միայն արժանի յիշատակաց վսեմ և նախանձելի անուն կը ժառանգեն, այլ նաև հանդերձ ջերմաջերմ համակրութեամբք խորին երախտագիտութեանց և անմոռանալի սխրագործութեանց արձանները կը քանդակեն ներկայ և ապագայ սերնդեան սրտից մէջ. որպիսի բարերարաց մէջ իրաւունք ունի և արժանի է հանդիսանալ նաև բարեյիշատակ Գրիգոր Թուշմալեանց՝ գլխաւորապէս Մոզդոկի մերազնէից մէջ։ Ուստի նա երջանիկ է այսու ևս, զի թէպէտ մարմնով չէ կենդանի, այլ հոգւով և բարենպատակ և սխրալի հաստատութեան յիշատակաւ՝ նորին անունը միշտ կենդանի և անմահ կը փայլի՝ ցորչափ նորուն կանգնած դպրոցը հաստատուն և բարեկարգ կը յարատևէ, և ցորչափ մերազնեայ մանկունք Ազգ. դաստիարակութիւն և լուսաւորութիւն կընդունին անդ միշտ երախտագէտ զգացմամբք օրհնելով և գովելով նորին արժանայիշատակ անունը։

Ահաւասիկ ընթերցեալ ճառը։

Ո՛վ բարեպաշտօն ժողովուրդք, որք կայք ժողովեալ 'ի ծոց սրբութեան տեղւոյս, զիտեմ զի կամիք մասնակից լինիլ հոգևոր հանդիսի կատարման պատուանուն քաղաքացւոյ Ձեր, Աղայ Գրիգորի Ստեփաննոսեան Թուշմալեանց. զոր պարտիմք զկնի սրբոյ պատարագիս կատարել օրինաշնորհեալ զկարգ թաղման վասն ննջեցելոյս։ Սիրելի՛ք՝ զի՞նչ արժան է մեզ մտածել այժմ, եթէ ոչ զայն թէ՝ յաւուր միում և մեք պարտիմք այս անդառնալի ճանապարհն գնալ. այսօր սա՝ վաղն և մեք. կրկին արժանի է մեզ մտածել սորա մարդկութեան վերայ։ Ասեմ, ծերունի իշխանս այս՝ որ դագաղի մէջ ննջեալ կայ, սա է՝ այն իշխանն՝ որ 'ի կենդանութեանն, և թէ այժմ 'ի հանգստեանն ժամանակի, Ձեզ ուղղորդողացդ լեալ է՝ և լինի Ձեր ուսուցիչ և վարժապետ։ Եթէ հարցանէք զիս՝ թէ սա որպէս լինի մեր ուսուցիչ, ասեմ Ձեզ, Ձեզ քաջ յայտնի է՝ սորա արժանագով մեծագործութիւնները և շատ տեսակ առաքինութիւնները։ Սա ուսուցանէ Ձեզ և ասէ, լերուք աշխատասէրք, որպէս ես ծառայելով վաճառականաց՝ գտի դուռն աշխատանաց և սովորեցայ, թողում Ձեզ օրինակս և ուսուցանեմ։ Ուսուցանեմ Ձեզ և զՀոգևորն, "Սերմանեցէք զսերմն բարի արդար վաստակոց ձերոց, և մի՛ ծուլանայք՝ այսօրեանն վաղն ձգելով, այլ մինչդեռ ժամանակս 'ի ձեռս ձեր են՝ գործեցէք զբարիս՝ զի զկեանս յաւիտենականս ժառանգիցէք։

Սիրելի ժողովուրդք. դուք լաւ զիտէք և ականատես իսկ էք՝ կատարեալ մարդկութեամբ աշխատելն սորա՝ թէ վասն ազգայնոց իւրոց՝ և թէ վասն քաղաքակցաց իւրոց։ Նա և զիտէք սորա քսանևեօթնամեայ աշխատութեանցն Երէցփոխական պաշտօնիս ծառայելն սրբոյ Տանս այս, և արդիւնաւորելն ցքսանևեօթն հազար ռուբլի արծաթիս, բաց 'ի արարեալ մեծամեծ ծախուցն, թէ եկեղեցւոյ վերանորոգութեան, թէ շրջապատի վերայ, և թէ այգւոյ վերայ. վասնորոյ՝ այսպիսի գործեր կատարելով եղեալ է ուսուցիչ ձեր և բարի մարդկութեան անուն ժառանգեալ։ Դի՝

տէք սորա հարազատ և պէտ ծառայութիւնները. գիտէք որ ունէր սովորութիւն ամենայն տարի օգնութիւն առնել տնանկաց և կարօտելոցը. գիտէք որ բաժանէր աղուրս, ապրանս և զգրաստ, որ աղքատքն կերակրվէին, հագուստ շինէին, և զպիտոյս իւրեանց լցուցանէին. Սորա մեծագործութիւնները շատ են եղեալ քաղաքիս միջումն և ականատես էք. Եւ մանաւանդ երևում է առաջի աչաց ձեր՝ կառուցեալ քարեայ ուսումնարանն որ 'ի դաւթեոջ սուրբ եկեղեցւոյս, ուսանին մանկտիք մեր. Սա առողջ ժամանակին աշխատէր առեալցնել թիւ աշակերտաց, որ մինչև 150 մանկտիք ուսանէին, բայց երբ տկարացուսա՝ փոքր առ փոքր սակաւաթիւ եղեն աշակերտքն. Զեզ յայտնի է Վ. Եհսափառ Կաթողիկոսի այց առնելն 'ի մեր քաղաք և յորդորելն զեշխանս առ 'ի կառուցանել վարժատուն. Սա որպէս բարի մարդ՝ և 'ի բարի սրտէ իւրմէ բղխեաց զբարութիւն, 'ի ներկայութեան իշխանաց քաղաքիս՝ յայտնեաց Վ. Եհսափառ Կաթողիկոսին զկամ իւր, և խոստացաւ կատարել զկամն Վ. Եհսափառին. առ այն և Վ. Եհսափառն օրհնեաց զհոգի սորա, և եղև շնորհակալ. որև կատարելով սա զխոստումն իւր, քանի տեսակ օրհնութեան Կոնդակս ստացաւ Վ. Եհսափառ Կաթողիկոսէն. և 'ի մէջ Համաթերթիից գրելով հրատարակվեցաւ Սորին մեծագործութեան անուն. այսպիսի բարի օրինակներ առնելով՝ եղեալ է Ձեր ուսուցիչ. Ահա այժմ ես լինի ուսուցիչ ասելով Ձեզ. "Եղբարք իմ և սիրելիք, տեսանէք զայս իմ վերջին օր, զոր եկեալ կամ անմուռնչ կացեալ 'ի ծոց սուրբ եկեղեցւոյս, կամիմ զիմ հրաժարական ողջոյնն Ձեզ ասել, մնացէք բարեաւ և խաղաղութեամբ՝ ով սիրելիք իմ և անձկալիք, և խնդրեմ՝ եթէ ես ձեր սիրան խոցեալ իցեմ, ներեցէք ինձ. և աղօթս արարէք վասն իմ առ Աստուած՝ զի նեմեսցէ յանցանաց իմոց և Ձեր.

Արդ՝ ով բարեպաշտն ժողովուրդք, ես հոգեւոր հովիւս Ձեր՝ զորս խօսեցայ 'ի դիմաց հանդուցելոյս, խնդրեմ պահպանել 'ի մտի Ձեր, և առաջի աչաց ձեր ունիլ օրս այս. Դարձեալ խնդրեմ և աղաչեմ զՁեզ, միաբերան ազօթս առնել ջերմեռանդ սրտիւ՝ 'ի դէմս սուրբ պատարագին Քրիստոսի, և բարեխօս ձգեցէք հաշտարար անմահ պատարագն Քրիստոսի, և ամենօրհնեալ սուրբ Կոյսն, զի թողութիւն շնորհեսցէ մարդկօրէն սխալանաց սորին՝ ներկայ հանդուցելոյս, և դասեսցէ զհոգի սորա 'ի դաս հրեշտակաց և արդարոց. իսկ տրտմեցելոց և սգաւորաց սիրտն՝ Հոգին սուրբ մխիթարեսցէ, ամէն.

Խրիմեան Հայրապետ Մահագրոյ.

Աղէքսանդրապոլցի Ռափայէլեանց մեծարգոյ, Գրիգոր Աղայն, որ արքունական ճանապարհի խճայարդ շինութիւնը ինքն ընդունած է կապալառութեամբ Սիմոնովկայ Մալականի գիւղիցը մինչև Ախտայ գիւղը, և նոյն ճանապարհը պատրաստել տալու համար գանվում է վանուցս Ցամաքաբերդ գիւղումը, տեսնելով սոյն սուրբ Անապատի կրզելոյս զառիվեր ճանապարհի առապար դրութիւնը, ստիպեալ իւր բարեպաշտութիւնից բարեհաճեցաւ տալ շինել մօտերս՝ իւր ծախիւքը՝ մի պատուական յարդ և լայն ճանապարհ համապատոյտ, որ հանում է կղզելոյս ստորոտիցը մինչև նորա կատարը. ուր շինուած են սուրբ Կարապետ լուսաւորչահիմն և սուրբ Առաքելոց անուանեալ Տաճարքը. ուր միշտ յաճախում են ուխտաւորքը երբ գիմում են այս տեղ 'ի վանս Սեւանու. Այդ ճանապարհը ունի մի քառորդ վերստի չափ երկարութիւն, և իւր կարևորութեամբը հանդերձ բաւականին շքեղութիւն է աւելացրել կղզելոյս բնական դրից վերայ, որ այսու իւր բազմաղարեան նոյնութիւնը փոքր 'ի շատէ փոխած է երևում.

Եթէ այս Պ. Գրիգորի պէս այլ ջերմեռանդ անձինք գտնուին Մենաստանիս համար, մի բարեբաղդ վիճակ կ'գտնէ սուրբ Սեւանը, որ մեր Ազգի համար սակաւ փառք չէ՝ թէ իւր անցեալովը և թէ իւր համայն նշանակութեամբը, ինչ տեղ կը վայելէ գոյանալ մի ազգօգուտ և արդիւնաւէտ վանք ըստ ուսումնական լուսաւորութեանն՝ իւր տեղւոյ յարմարութեամբն և պատուականութեամբ.

Այս տարի ձմեռնային ցրտի հոսանքը շատ երկար տևեց այս Վարաժնունեաց գաւառումը